

ջողկել)։ Արտոնատերը փոխանակ խոստովանելու քե՛ս ո՛չ միայն տարեկան վարձքն, այլ և բերքը փոխանցելու համար 35 ոսկի կանխիկ գանձած է, իր բերքին մանավանդ կ'ստորագրե՛ր կառավարութեան ուղղեալ երկոտղ պաշտօնագրով մը յայտարարող քե՛ս այլ ևս չուզեմ «Լոյս»-ը հանել։ Տպագր. Տեսչութենէն իսկոյն հրաման կու գայ Բիւզանդի քե՛ս այլ ևս իրաւունք չունի բերքը հրատարակելու։ — Պօզաճեան երբ լրագր. հրապարակի վրայ չկրնար արմատ բռնել, կը փորձէ գրավաճառութիւնը որ — իր խոստովանութեան համեմատ — լրագրութենէ աւելի աղտոտ գործ մըն է։ — 8-10 տարի կը վարէ Զաքարճըլարի իր խանութը, լոյս ընծայելով կարգ մը դասագիրքեր՝ շատ մը դպրոցներէ բռնուած, (Էթօ տը Բառի, Աշխ. և Ֆրնս. քերականութիւններ, Հայոց Պատմութիւն, Ֆրանսահայ գրպանի բառարան ևն.)։ Իր փոխ դրամագլուխը կեր կու տայ **ՄԷՃԵԼԷԻ** հրատարակութեան և կը քաշուի առևտուր. գործի մը մեջ, երբ **Բիւզանդիոնի** երեսուր բերքին ստորոտը կը տանի գինք՝ իրբն բարգմանիչ բերքօնի։ Ա. տարիներուն՝ յաջորդաբար կը հայացունէ Օնէի «Կամբը», «Տքք. Ռամփօն», Գօթի «Յանցաւոր»ը, [նաև ուրիշ ժամանակներ՝ Օնէի «Գարրնոցապետը», Տիւմայի «Բագունոյն մանեակը», Ժ. Վեռնի «Շուրջ գլուսնով»ը, «Լրտեսներու երկիրը», «Գաղտնիք Բարիգու»ն (Է. Սիւ), Ինքնապաշտպանութիւն]։ Պօզաճեան «Բիւզանդիոն»ի Բ. տարիէն սկսեալ կ'ստանձնէ «Ներքին լուրեր»ու խմբագրութիւնը՝ բունտ պահպանողական իր անփոփոխ աշխարհաբարով, մինչև իր արուիչը Քեչեանի հետ և նետուիչը «Ծաղիկ» օրաբերքի գիրկը որ իր և Ե. Տ. Անդրեասեանի ձեռքերուն մեջ կ'սկսի ճշտորիչ։ Վերջնոյն խափանումէն ետք Պօզաճեան 1899 ի վերջերը կը փորձէ գիտական ու գրական ձեւով ինձ հետ հրատարակել «Հանրագիտակ»ը որ 6 ամսուան կեանք մը միայն կ'ունենայ։ — Անցեալ տարի Ս. Զեմլեքճեանի, Ա. Գալաքճեանի և Ե. Սուգիկեանի հետ կը հիմնէ «Լուսարձակ» հանապազօրեան, իր «ընդդիմադիր օտկան», որուն մեջ անստորագիր և **Խուրազան** ու **Մհրալ** ծածկանուններով ցարդ կ'երեւի՝ քննադատական սուր ու շեշտ նիշերը տեղացունելով ամէն օր։ — Իր կողակիցը եղած է 1894 ին մեռնող Տիկին Բերուզ որ յօդուածներ ունի ամուսնոյն հրատարակած «Լոյս»ին և Մելիքեանի «Հայրենիք»ին մեջ Ա. Բ. Գ. և **Բիսաճոյ** ծածկանուններով։



163. **Տպ. «Ախթեմալերի»**, ը կազմած են ԵՐՈՒՆԱՆԻ ՄՍՐԼԵԱՆ ու ԳԱՅՐԻԷԼ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ։ — Ա.ը ծնած է Գանախիլ 1888 ին։ Կառավարութիւնը Տրիպօլիս դրկած է



Գ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ, Ե. ՄՍՐԼԵԱՆ
(Նրաւ անբաժանելիները)

գինք՝ հօրը քով — քաղաքական յանցանք գլեանա բերդարգելութեան դատապարտեալ մը։ Երուանդ հոն կը յաճախէ Ֆոռոններուն դպրոցը։ Իր հօր աքսորէ փախուստին առիւ՛ ինք Պօլիս բերուելով երաշխաւորութեամբ ազատ կ'արձակուի։ 1902ին կ'սկսի գրաշարութեան գոր ցարդ կը շարունակէ։ Յեղափոխական խնդիրի մը առիւս ոստիկանութենէն հետապնդուելով կը փախչի և հօրը հետ կը միանայ Գանիքի՝ ուր բաւական ատեն կ'աշխատի Journal du Caireի տպարանը, մինչև Սահմանադրութեան հռչակում, որմէ յետոյ կը փոխադրուի Պօլիս։ — Ինք ու Գ. Յովհաննէսեան «Մանգումէ»ի գրաշարական գործը կ'ստանձնեն, ապա 16 օրեայ **Օրագիրը**, պրակ առ պրակ Թշուառները (վերջինս Զարդարեան եղբայրը հետ)։ Պօլսոյ մեջ գիրքի մը՝ պրակով սպառման նորութիւնն իրենցմով սկսած է։ «Թշուառներ»ն աւարտելէ վերջ կը հիմնեն **Ախթեմալերի Մասնագարը**, հրատարակելով «ճշմարտութիւնը, երեք հրացանակիրները», «Բասն տարի ետք», «Իննսուն երեք», Պալասանեանի պատկերազարդ «Հայոց Պատմութիւն»ը, «Պատերազմ և խաղաղութիւն», Յերենից 3 գործերը, Թիեռի «Փրանսական յեղափոխութեան պատմութիւն»ը (5 հատոր պատկերազարդ)։ Իսկ 19 Նոյ. 1911 ին կ'ստանձնեն հրատարակումը **Լուսարձակի**՝ 4 խմբագրաց հետ համախորհուրդ։ — Գարբիէլ ծնած է Հէյպէլի կղզին 1887 ին։ 1900 ին սկսած է գրաշարութեան։ Ինքնօգնութեամբ յառաջդիմած և լաւ անուն մը շինած է։

